# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

N 1324 - Ա

ՀԵՐՄԻՆԵ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ ԵՎ ԹԱՄԱՐԱ ՀՈՎՆԱՆՅԱՆԻՆ ՂԱԶԱԽՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳՈՐԾՈՒՂԵԼՈՒ ՄԱՍԻՆ

---

Համաձայն «Կառավարության կառուցվածքի և գործունեության մասին» օրենքի 7-րդ հոդվածի 5-րդ մասի՝

1. 2022 թվականի նոյեմբերի 16-23-ը Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմի սփյուռքի գործերի գլխավոր հանձնակատարի գրասենյակի ծրագրերի իրականացման և մշտադիտարկման վարչության պետ Հերմինե Հարությունյանին և Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարության աշխատակազմի մարդու իրավունքների և հումանիտար հարցերի վարչության մոնիթորինգային մարմինների հետ համագործակցության բաժնի երրորդ քարտուղար Թամարա Հովնանյանին գործուղել Ղազախստանի Հանրապետություն (Աստանա)՝ Ղազախստանի Հանրապետությունում կայանալիք արտահերթ նախագահական ընտրությունների ընթացքում ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ի կարճաժամկետ դիտորդական առաքելություն իրականացնելու նպատակով:

2. Հերմինե Հարությունյանի և Թամարա Հովնանյանի՝ Ղազախստանի Հանրապետություն գործուղման ճանապարհածախսը և բժշկական ապահովագրության վճարները, համաձայն փաստացի կատարված ծախսերը հիմնավորող

փաստաթղթերի, ինչպես նաև յուրաքանչյուր դիտորդի համար ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ի ներկայացրած գործուղման ծախսերը՝ համաձայն հավելվածի, կատարել Հայաստանի Հանրապետության 2022 թվականի պետական բյուջեով արտասահմանյան պաշտոնական գործուղումների համար նախատեսված միջոցների հաշվին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

08.11.2022
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ